ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ
RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE

14.01.2025

ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ
պարոն Ալֆրեդ Քոչարյանին

Հարգելի պրն. Քոչարյան,

Ձեզ եմ ներկայացնում Հայկական ճարտարապետություն ուսումնասիրող հիմնադրամի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագիրը:

ՀՃՈւ հիմնադրամի տնօրեն Էմմա Աբրահամյան

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РА
RA MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT
Մուտք N ՆՀ-2276-2025
«14» 01 2025թ.

ARMENIA Room 61, 24/4 Marshal Baghramyan Av., Institute of Art, National Academy of Sciences, Yer., 375003, Tel/Fax: (374 1) 521 525; E-mail: raayer@sci.am
USA 9644 Saluda Avenue Tujunga CA 91042 USA Tel: 1.818 507 0938, Fax: 1.818 548 8108; E-mail: President@RAA-USA.org
GERMANY Roland Strasse 41, 52070 Aachen, Germany Tel: 49 241 154 934, Fax: 49 241 159 973; E-mail: armen@-online.de

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ
RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE

14.01. 2025

ՀՀ ԿԳ-ՄՍ նախարարի տեղակալ
պարոն Ալֆրեդ Քոչարյանին

Հարգելի պարոն Քոչարյան,

Ստորև ներկայացնում եմ 2026, 2027, 2028 թթ. ժամանակահատվածում ՀՃՈՒ հիմնադրամի աշխատանքային ծրագիրը:

2010 թ.-ից ի վեր արդեն 15-րդ տարի է, որ մեր հիմնադրամը յուրաքանչյուր տարի «Աջակցություն հայկական պատմամշակութային հուշարձանների վավերագրմանը» միջոցառման իրականացման նպատակով նորոգվող պայմանագրի շրջանակներում կատարում է Արտերկրում հայկական մշակութային ժառանգության հաշվառման և պատմամշակութային հուշարձանների վավերագրման աշխատանքներ:

Կարևորելով հատկապես Արևմտյան Հայաստանի տարածքում գտնվող և տարեցտարի ակնհայտորեն և կտրուկ նվազող հայկական պատմական հուշարձաններն օր առաջ արձանագրելու հույժ կարևոր խնդիրը՝ հիմնադրամն իր կամքից անկախ արդեն երկար ժամանակ աշխատանքներն ուղղորդել է հատկապես այդ նպատակին: Սկսած 2010 թ.-ից՝ արդեն կազմել ենք 6132 միավոր պատմական հուշարձանի վկայագիր, որից 862-ը՝ Հնդկաստանից:

Հաշվի առնելով սույն աշխատանքի անհետաձգելի կարևորությունը՝ տարիներ շարունակ (նույնիսկ 2020-2023 թթ., երբ առկա էր Քովիդ համավարակ, քաղաքական լարվածություն, Արցախյան պատերազմ) հիմնադրամի գործին նվիրված աշխատանքային խումբը շարունակել և շարունակում է զբոսաշրջության անվան ներքո մուտք գործել Թուրքիա և, ըստ էության, արտակարգ պայմաններում ծավալել իր նպատակային աշխատանքները:

Իհարկե, 2015 թ. աշնանից, ինչ վրացական իշխանություններն առանց որևէ բացատրության արգելեցին հիմնադրամի՝ միանգամից 10 աշխատակիցների մուտքը Վրաստան, դեպի Թուրքիա գիտարշավների կազմակերպումը հավելյալ դժվարությունների առաջ կանգնեց, բայց ելքը, իհարկե, գտնվեց, և դրանից հետո հիմնական խումբն Արևմտյան Հայաստան է մեկնում Իրանի տարածքով, կամ էլ անցանկալի անձի կարգավիճակից ազատ մնացած մեր աշխատակիցները՝ Վրաստանի տարածքով:

Հարգելի տիկի՛ն Անդրեասյան, ընդհանուր գծերով ներկայացնելով մեր՝ ըստ էության գաղտնի առաջ տարվող աշխատանքների առանձնահատկությունները, ստորև ցանկանում եմ նշել, որ առաջիկա 2026-2028 թթ. մեր աշխատանքային առաջնահերթությունները, ըստ էության, մնում են անփոփոխ:

• Հուսով ենք, որ Արևմտյան Հայաստանում դաշտային աշխատանքները կկարողանանք շարունակել առնվազն ևս մի քանի գավառների տարածքում (նախնական շեշտադրմամբ՝ *Կարսի մարզի Գյոլե, Զարիշատ, Կաղզման, Նախիջևան, Չըլդր և Սարիղամիշ; Բիթլիսի նահանգի Բուլանըխ, Ճապաղջուր, Սղերդ և Մուշ, Էրզրումի նահանգի Բագրևանդ, Դերջան, Երզնկա, Խարբերդի նահանգի Արաբկիր, Ակն, Խարբերդ գավառներ*):

ARMENIA Room 61, 24/4 Marshal Baghramyan Av., Institute of Art, National Academy of Sciences, Yer., 375003, Tel/Fax: (374 1) 521 525; E-mail: raayer@sci.am
USA 9644 Saluda Avenue Tujunga CA 91042 USA Tel: 1.818 507 0938, Fax: 1.818 548 8108; E-mail: President@RAA-USA.org
GERMANY Roland Strasse 41, 52070 Aachen, Germany Tel: 49 241 154 934, Fax: 49 241 159 973; E-mail: armen@-online.de

- Համանման աշխատանքներն անհրաժեշտության դեպքում Իրանում ներառելու են Խոյ ու Մակու գավառները, ինչպես նաև Վրաստանի մի շարք շրջաններ (հիմնականում՝ որոշ լրացումներ):

• 2026-2028 թթ. ընթացքում շարունակելու ենք նաև մեր ճամփորդությունների ընթացքում կատարված հատակագծերի և չափագրությունների՝ Archicad-20 ծրագրով մաքրագծման աշխատանքները: Շարունակաբար ընթանալու են նաև Նախիջևանի, Արցախի և Բուն Աղվանքի (Շամախիի, Շաքիի և Վարդաշենի շրջաններ) բնակավայրերի և պատմաճարտարապետական հուշարձանների աշխարհագրական կոորդինատների ցանկագրման աշխատանքները: Շարունակվելու են նաև մեր ճամփորդությունների քարտեզագրման լրացման աշխատանքներն ըստ տարիների:

• 2026-2028 թթ. ՀՃՈւ հիմնադրամի նախատեսված աշխատանքներում կարևորագույն տեղ են զբաղեցնելու նաև Մեծ Հայքին և Արցախին նվիրված ուսումնասիրությունները (քրիստոնյա-հայկական ժառանգություն, Աղրբեջանի մշակութային եղեռնը բացահայտող ուսումնասիրություններ, մահմեդական հուշարձաններ): Ի դեպ, 2022-2024 թթ. ՀՀ ԿԳՄՍ նախարարության նյութական աջակցությամբ հրատարակել ենք ռուսերենով և անգլերենով **«Արցախ»** քարտեզագիրքը, **"The Endangered Chrisian Armenian Heritage of Artsakh"** ալբոմը (անգլերեն), **«Հայկական աղբյուրները»** եռալեզու պատկերագիրքը, **«Արտակ արքեպիսկոպոս Սանուկյանի անվան Թեհրանի հայոց ազգային-ազգագրական թանգարանի հավաքածուն»** գրքույկը (պարսկերեն), "Azerbaijan and the Destruction of Armenian Civilization" պատկերազարդ ալբոմը (անգլերեն), **«Բուն Աղվանք»-Ա**, **«Հնդկաստանի հայահոծ բնակավայրերի վիմագրերը»**, **«Խոջիվանք»** և **«Համբարձում Երամյան»** աշխատությունները (հայերեն), **«Վարձք»** հանդեսի մի քանի համարներ և պատի օրացույցները:

- Հրատարակել ենք նաև **«Արցախ. վտանգված ժառանգություն-1»** եռալեզու պատկերագիրքը, "A State Policy of Vandalism in Azerbaijan" գրքույկը:

• 2025 թ. նախատեսում ենք ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ լույս ընծայել "Akhaltskha", "The Mayors of Tiflis", "Armenian in Kakhet" աշխատություններն անգլերենով և «Վարձք» հանդեսի մեկ համար:

• 2026-2028 թթ. միջնաժամկետային ծրագրի շրջանակում, բացի կազմվելիք հուշարձանների վկայագրերից, նախատեսում ենք յուրաքանչյուր տարի ձեռնամուխ լինել հետևյալ աշխատությունների ստեղծման աշխատանքներին. դրանք են՝ «Անի. եռաչափ վերակազմություն» (հատոր 1), «Մռավականք» (անգլերեն), «Բուն Աղվանք»-Բ, «Հաղրութ», «Սասուն» (հայերեն): Հրատարակության ենք պատրաստելու նաև «Վարձք» հանդեսը՝ բազմաբնույթ հոդվածներով: Կշարունակենք «Բուն Աղվանք»-Ա գրքի ռուսերեն թարգմանությունը:

• Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվելու են նաև հայ պարբերական մամուլից, տպագիր այլ նյութերից, ինչպես նաև անտիպ վավերագրերից (մասնավորապես՝ ՀՀ Ազգային արխիվի, Մաշտոցի անվան Մատենադարանի և Եղիշե Չարենցի անվան գրականության թանգարանի ֆոնդերի) հայոց աշխարհի բնակավայրերի պատմությանն ու պատմական հուշարձաններին առնչվող տվյալների դուրսբերման ուղղությամբ կատարվող աշխատանքները:

• Շարունակելու ենք նաև raa-am.org (կայքէջի արդիականացման աշխատանքներն իրականացվել են նախարարության հատկացրած դրամաշնորհի շրջանակներում) և artsakhmonuments.org (հովանավորների թվում է նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը) կայքերի լրացման աշխատանքները:

Հ.Գ. գրությանս կցում եմ 2026-2028 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախահաշիվները:

ՀՃՈՒ հիմնադրամի տնօրեն Էմմա Աբրահամյան

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Աջակցություն հայկական պատմամշակութային հուշարձանների վավերագրմանը» միջոցառման իրականացման հետ կապված ծախսերի

(հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության
01 հունվար 2026 թ. – 31 դեկտեմբեր 2026 թ.
ժամանակահատվածի համար)

Հ/Հ	Ծախսատեսակի անվանումը	Գումարը (հազ. դրամ)
1.	**Աշխատանքի վարձատրություն** ***(ներառյալ հարկերը)***՝ - Հիմնադրամի տնօրեն (1 մարդ)՝ 135000 դրամ - Հաշվապահ (1 մարդ)՝ 104000 դրամ - Պատմաբան (1 մարդ)՝ 104000 դրամ - Թվայնացնող (1 մարդ)՝ 104000 դրամ - Բանասեր (2 մարդ)՝ 104000 դրամ - Ծրագրավորող (1 մարդ)՝ 104000 դրամ - Լուսանկարիչ (1 մարդ)՝ 104000դրամ - Ճարտարապետ (1 մարդ)՝ 104000դրամ - Ձեռագրագետ (1 մարդ)՝ 104000դրամ - Բանասեր, խմբագիր (1 մարդ)՝ 104000դրամ - Անգլերենի թարգմանիչ (1 մարդ)՝ 104000դրամ - Թուրքագետ, արաբագետ (1 մարդ)՝ 104000դրամ - Եռաչափ մոդելավորող (1 մարդ)՝ 104000դրամ - Օպերատոր (1 մարդ)՝ 104000դրամ - Գրաֆիկ դիզայներ (1 մարդ)՝ 104000դրամ - Վարորդ (1 մարդ)՝ 104000 դրամ **Ընդամենը (17 մարդ)՝ 1695.0 հազ. դրամ x 12 ամիս = 21588.0 հազ. դրամ**	**21588.0**
2.	*1.* ***Գործուղման ծախսեր*** *(Արևմտյան Հայաստանի Կարսի մարզի Զարիշատ, Կաղզվան, Վանի նահանգի Արճակ, Թիմար, Խոշաբ, Էրզրումի նահանգի Ալաշկերտ, Բիթլիսի նահանգի Սասուն)* *1.1 Կարսի մարզի Զարիշատ գավառը ներկայիս Արփաչայն է, Կաղզվանը՝ Կաղըզմանը:* - *օրապահիկ՝* - *6 մարդ x 14 օր x 62դոլար x 24580 դրամ = 2,064,720 Դրամ* - *գիշերավարձ՝* - *6 մարդ x 14 օր x 55.3 դոլար x 21930 դրամ = 1,842,120 Դրամ* *1.2 Վանի նահանգի Արճակ գավառը ներկայիս Էրչեկն է: Թիմարը չի անվանափոխվել: Խոշաբը ներկայումս մտնում է Գյուրփրնարի մեջ :* *գիշերավարձ* - *6 մարդ x 22 օր x 62 դոլար x 24580 դրամ = 3,244,560 Դրամ* - *օրապահիկ՝* - *6 մարդ x 22 օր x 55.3 դոլար x 21930 դրամ = 2,894,760 Դրամ* *1.3 Էրզրումի նահանգի Ալաշկերտ գավառը ներկայիս Էլեշկիրտն է:* *գիշերավարձ* - *6 մարդ x 22 օր x 62 դոլար x 24580 դրամ = 3,244,560 Դրամ* - *օրապահիկ՝* - *6 մարդ x 22 օր x 55.3 դոլար x 21930 դրամ = 2,894,760 Դրամ* *1.4 Սասունը ներկայիս Բաթման իլի Սասոն շրջանն է:* *գիշերավարձ*	**22324.8**

	- *6 մարդ x 22 օր x 62 դոլար x 24580 դրամ = 3,244,560 Դրամ* - *օրապահիկ՝* - *6 մարդ x 22 օր x 55.3 դոլար x 21930 դրամ = 2,894,760 Դրամ* - ***Ընդամենը՝ 22324.8 հազ. դրամ***	
3.	**Վկայագրերի կազմման ծախսեր՝** - A-4 թուղթ (50 x 2400 դրամ)՝ 120.0 հազ. դրամ - Տպիչի փոշի (15 x 3000 դրամ)՝ 45.0 հազ. դրամ	**165.0**
4.	**Կապի ծախսեր՝** - ինտերտնետ կապի սպասարկում (12 ամիս x 18000 դրամ)՝ 216.0 հազ. դրամ - կայքէջերի սպասարկում (https://raa-am.org; https://artsakhmonuments.org; https://armenianarchitecture.org) տարեկան -58.0 հազ դրամ միջքաղաքային վճար՝ 6.901 դրամ միջին հաշվարկով)՝ 82.8 հազ. դրամ	**356.8**
5.	**Գրքերի տպագրություն՝** - «Անի». Եռաչափ վերակազմություն, հ. Ա՝ պատկերագիրք 500 օրինակ x 8,500 դրամ = 4250.0 հազ. դրամ - «Վարձք». հանդես (1 համար)՝ 500 օրինակ x 1500 դրամ = 750.0 հազ. դրամ	**5000.0**
	ԸՆԴԱՄԵՆԸ՝	**49434.6**
6.	**ԱԱՀ***	**9886.92**
	ԸՆԴԱՄԵՆԸ, ներառյալ ԱԱՀ	**59321.52**

«14» «01» 2025 թ.

Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամի տնօրեն՝ Է. Աբրահամյան

Գլխավոր հաշվապահ՝ Վ. Խաչատրյան

Digitally signed by
KHACHATRYAN
VARDUHI 6610770115
Date: 2025.01.14
14:38:27 AMT

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Աջակցություն հայկական պատմամշակութային հուշարձանների վավերագրմանը» միջոցառման իրականացման հետ կապված ծախսերի

(հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության
01 հունվար 2027 թ. – 31 դեկտեմբեր 2027 թ.
ժամանակահատվածի համար)

Հ/Հ	Ծախսատեսակի անվանումը	Գումարը (հազ. դրամ)
1.	**Աշխատանքի վարձատրություն** ***(ներառյալ հարկերը)***՝ - Հիմնադրամի տնօրեն (1 մարդ)՝ 135000 դրամ - Հաշվապահ (1 մարդ)՝ 104000 դրամ - Պատմաբան (1 մարդ)՝ 104000 դրամ - Թվայնացնող (1 մարդ)՝ 104000 դրամ - Բանասեր (2 մարդ)՝ 104000 դրամ - Ծրագրավորող (1 մարդ)՝ 104000 դրամ - Լուսանկարիչ (1 մարդ)՝ 104000դրամ - Ճարտարապետ (1 մարդ)՝ 104000դրամ - Ձեռագրագետ (1 մարդ)՝ 104000դրամ - Բանասեր, խմբագիր (1 մարդ)՝ 104000դրամ - Անգլերենի թարգմանիչ (1 մարդ)՝ 104000դրամ - Թուրքագետ, արաբագետ (1 մարդ)՝ 104000դրամ - Եռաչափ մոդելավորող (1 մարդ)՝ 104000դրամ - Օպերատոր (1 մարդ)՝ 104000դրամ - Գրաֆիկ դիզայներ (1 մարդ)՝ 104000դրամ - Վարորդ (1 մարդ)՝ 104000 դրամ **Ընդամենը (17 մարդ)՝ 1695.0 հազ. դրամ x 12 ամիս = 21588.0 հազ. դրամ**	**21588.0**
2.	*1.* ***Գործուղման ծախսեր*** *(Արևմտյան Հայաստանի Կարսի մարզի Չըղըր, Գյոլե և Սարիղամիշ, Բիթլիսի նահանգի Ճապաղջուր և Սղերդ, Էրզրումի նահանգի Երզնկա)* *1.1 Կարսի մարզի Չըղըրը ներկայիս համանուն շրջանն է, Գյոլեն և Սարիղամիշը նույնպես չեն անվանափոխվել։* - *օրապահիկ՝* - *6 մարդ x 25 օր x 62դոլար x 24580 դրամ = 3,687,000 Դրամ* - *գիշերավարձ՝* - *6 մարդ x 25 օր x 55.3 դոլար x 21930 դրամ = 3,289,500 Դրամ* *1.2 Բիթլիսի նահանգի Ճապաղջուրը ներկայիս Բինգյոլն է, Սղերդը՝ Սիիրթը ։* *գիշերավարձ* - *6 մարդ x 33 օր x 62 դոլար x 24580 դրամ = 4,866,840 Դրամ* - *օրապահիկ՝* - *6 մարդ x 33 օր x 55.3 դոլար x 21930 դրամ = 4,342,140 Դրամ* *1.3 Էրզրումի նահանգի Երզնկա ներկայիս Էրզինջանն է։* *գիշերավարձ* - *6 մարդ x 22 օր x 62 դոլար x 24580 դրամ = 3,244,560 Դրամ* - *օրապահիկ՝* - *6 մարդ x 22 օր x 55.3 դոլար x 21930 դրամ = 2,894,760 Դրամ* - ***Ընդամենը՝ 22324.8 հազ. դրամ***	**22324.8**

3.	**Վկայագրերի կազմման ծախսեր՝** - A-4 թուղթ (50 x 2400 դրամ)՝ 120.0 հազ. դրամ - Տպիչի փոշի (15 x 3000 դրամ)՝ 45.0 հազ. դրամ	**165.0**
4.	**Կապի ծախսեր՝** - ինտերտնետ կապի սպասարկում (12 ամիս x 18000 դրամ)՝ 216.0 հազ. դրամ - կայքէջերի սպասարկում (https://raa-am.org; https://artsakhmonuments.org; https://armenianarchitecture.org) տարեկան -58.0 հազ դրամ միջքաղաքային վճար՝ 6.901 դրամ միջին հաշվարկով)՝ 82.8 հազ. դրամ	**356.8**
5.	**Գրքերի տպագրություն՝** - «Մռավականք» գիրք (անգլերեն) 500 օրինակ x 8,500 դրամ = 4250.0 հազ. դրամ - «Վարձք». հանդես (1 համար)՝ 500 օրինակ x 1500 դրամ = 750.0 հազ. դրամ	**5000.0**
	ԸՆԴԱՄԵՆԸ՝	**49434.6**
6.	**ԱԱՀ***	**9886.92**
	ԸՆԴԱՄԵՆԸ, ներառյալ ԱԱՀ	**59321.52**

«14» «01» 2025 թ.

Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամի տնօրեն՝ Է. Աբրահամյան

ՀՃՈՒ RAA 00053543

Գլխավոր հաշվապահ՝ Վ. Խաչատրյան

Digitally signed by
KHACHATRYAN
VARDUHI 6610770115

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Աջակցություն հայկական պատմամշակութային հուշարձանների վավերագրմանը» միջոցառման իրականացման հետ կապված ծախսերի

(հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության

01 հունվար 2028 թ. – 31 դեկտեմբեր 2028 թ.

ժամանակահատվածի համար)

Հ/Հ	Ծախսատեսակի անվանումը	Գումարը (հազ. դրամ)
1.	**Աշխատանքի վարձատրություն *(ներառյալ հարկերը)*՝** - Հիմնադրամի տնօրեն (1 մարդ)՝ 135000 դրամ - Հաշվապահ (1 մարդ)՝ 104000 դրամ - Պատմաբան (1 մարդ)՝ 104000 դրամ - Թվայնացնող (1 մարդ)՝ 104000 դրամ - Բանասեր (2 մարդ)՝ 104000 դրամ - Ծրագրավորող (1 մարդ)՝ 104000 դրամ - Լուսանկարիչ (1 մարդ)՝ 104000դրամ - Ճարտարապետ (1 մարդ)՝ 104000դրամ - Ձեռագրագետ (1 մարդ)՝ 104000դրամ - Բանասեր, խմբագիր (1 մարդ)՝ 104000դրամ - Անգլերենի թարգմանիչ (1 մարդ)՝ 104000դրամ - Թուրքագետ, արաբագետ (1 մարդ)՝ 104000դրամ - Եռաչափ մոդելավորող (1 մարդ)՝ 104000դրամ - Օպերատոր (1 մարդ)՝ 104000դրամ - Գրաֆիկ դիզայներ (1 մարդ)՝ 104000դրամ - Վարորդ (1 մարդ)՝ 104000 դրամ **Ընդամենը (17 մարդ)՝ 1695.0 հազ. դրամ x 12 ամիս = 21588.0 հազ. դրամ**	**21588.0**
2.	*1.* ***Գործուղման ծախսեր*** *(Արևմտյան Հայաստանի Բիթլիսի նահանգի Բուլանըխ և Մուշ, Էրզրումի նահանգի Դերջան, Խարբերդի նահանգի Ակն, Արաբկիր և Խարբերդ)* *1.1 Բիթլիսի նահանգի Բուլանըխ և Մուշ գավառները չեն անվանափոխվել։* - *օրապահիկ՝* - *6 մարդ x 25 օր x 62դոլար x 24580 դրամ = 3,687,000 Դրամ* - *գիշերավարձ՝* - *6 մարդ x 25 օր x 55.3 դոլար x 21930 դրամ = 3,289,500 Դրամ* *1.2 Էրզրումի նահանգի Դերջան գավառը ներկայիս Թերջանն է՝* *գիշերավարձ* - *6 մարդ x 33 օր x 62 դոլար x 24580 դրամ = 4,866,840 Դրամ* - *օրապահիկ՝* - *6 մարդ x 33 օր x 55.3 դոլար x 21930 դրամ = 4,342,140 Դրամ* *1.3 Խարբերդի նահանգի Ակն գավառը ներկայիս Քեմալիեն է, Արաբկիրը չի անվանափոխվել, Խարբերդը՝ Հարպութն է։* *գիշերավարձ* - *6 մարդ x 22 օր x 62 դոլար x 24580 դրամ = 3,244,560 Դրամ* - *օրապահիկ՝* - *6 մարդ x 22 օր x 55.3 դոլար x 21930 դրամ = 2,894,760 Դրամ* - ***Ընդամենը՝ 22324.8 հազ. դրամ***	**22324.8**

3.	**Վկայագրերի կազմման ծախսեր՝** - A-4 թուղթ (50 x 2400 դրամ)՝ 120.0 հազ. դրամ - Տպիչի փոշի (15 x 3000 դրամ)՝ 45.0 հազ. դրամ	**165.0**
4.	**Կապի ծախսեր՝** - ինտերտնետ կապի սպասարկում (12 ամիս x 18000 դրամ)՝ 216.0 հազ. դրամ - կայքէջերի սպասարկում (https://raa-am.org; https://artsakhmonuments.org; https://armenianarchitecture.org) տարեկան -58.0 հազ դրամ միջքաղաքային վճար՝ 6.901 դրամ միջին հաշվարկով)՝ 82.8 հազ. դրամ	**356.8**
5.	**Գրքերի տպագրություն՝** - «Հադրութ» գիրք (հայերեն) 500 օրինակ x 8,500 դրամ = 4250.0 հազ. դրամ - «Վարձք». հանդես (1 համար)՝ 500 օրինակ x 1500 դրամ = 750.0 հազ. դրամ	**5000.0**
	ԸՆԴԱՄԵՆԸ՝	**49434.6**
6.	**ԱԱՀ***	**9886.92**
	ԸՆԴԱՄԵՆԸ, ներառյալ ԱԱՀ	**59321.52**

«14» «01» 2025 թ.

Հայկական ճարտարապետության
ուսումնասիրող հիմնադրամի տնօրեն՝ Է. Աբրահամյան

Գլխավոր հաշվապահ՝ Վ. Խաչատրյան

Digitally signed by
KHACHATRYAN
VARDUHI 6610770115